ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԻՆՋ, ԱՐԱՄՈՒՍ, ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԼ ԱԲՈՎՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՌՈՍԻԱ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԵՎ ԵԶՐԱՔԱՐԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԱԲՀ-ԲՄԱՇՁԲ-22/20-2»

ք. Աբովյան «24» օգոստոսի 2022թ.

Աբովյանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Է. Բաբայանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՅԷՄԴԻ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Դ. Ապետնակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Աբովյան համայնքի կարիքների համար Աբովյան համայնքի Առինջ, Արամուս, Մայակովսկի բնակավայրերի ասֆալտապատման, ինչպես նաև Աբովյան բնակավայրի Ռոսիա փողոցի ասֆալտապատման և եզրաքարերի փոխարինման շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն --- տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի

արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[28]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տաս աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական

[28] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 98 607 677 (իննսունութ միլիոն վեց հարյուր յոթ հազար վեց հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամ՝ որից 16 434 612 (տասնվեց միլիոն չորս հարյուր երեսունչորս հազար վեց հարյուր տասներկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

Պայմանագրի գնի 35 տոկոսը սուբսիդավորվում է ՀՀ Կառավարության կողմից, որը տրամադրվելու է ավարտական ակտը ստորագրելուց հետո սուբվենցիաների տրամադրման կարգի և ժամկետների համաձայն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[30.1]:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[30] Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

[30.1] Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»

[31] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[32]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել

---

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[33]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[34]

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ,

---

[33] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

[34] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Աբովյանի համայնքապետարան	«ԷՅԷՄԴԻ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
ք. Աբովյան, Բարեկամության հր. 1	Հասցե՝ Արագածոտն, Աշտարակ, Մուղնի 2 թաղամաս 191
ՀՎՀՀ՝ 03561498	ՀՎՀՀ՝ 05027938
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ	Բանկ՝ «Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ900102462299	Հ/Հ՝ 2051322089481001
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
«24» օգոստոսի 2022թ. կնքված
«ԱԲՀ-ԲՄԱՇՁԲ-22/20-2» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԻՆՋ, ԱՐԱՄՈՒՍ, ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱԲՈՎՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՌՈՍԻԱ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԵՎ ԵԶՐԱՔԱՐԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Աբովյան համայնքի մի շարք բնակավայրերի փողոցների ասֆալտապատման նախագիծ Արամուս բնակավայր

Հ/Հ	Շիֆր, նորմա-տիվի համարը	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուրի արժեքը միավորի համար	Ընդհանուրի արժեքը	Տոկոսային կշիռ
Երիտասարդական 1-ին փողոց 1-ին նրբանցք							
I. Հողային աշխատանքներ							
1	E1-1623 E1-1630	IV(10e) կարգի գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 20մ լիցք	1000մ3	0.003	550,000.00	1,650.00	
2	E1-1582	IV(10e) կարգի գրունտի մշակում 1,0 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.076	550,000.00	42,020.00	
3	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	141.34	3,000.00	424,020.00	
4	E1-1582	IV(8դ) կարգի գրունտի մշակում 1,0 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.053	550,000.00	29,095.00	
5	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	98.92	3,000.00	296,769.00	
6	E1-1130	Հողային պաստառի համահարթեցում մեխանիզմով	100մ2	5.36	15,000.00	80,400.00	
II.Ճանապարհային պատվածք							
7	E27-20	Ավազակոպճային շերտ հմիջ=10սմ	մ3	45.20	2,000.00	90,400.00	
8	E27-43	Խճային հիմք h=15սմ	100մ2	4.52	55,000.00	248,600.00	
9	E27-251 63-1	Բիտումի լցաբաշխում 4.12տ /1000մ2/	տ	1.862	230,000.00	428,315.20	
10	E27-164-2	Տաք մանրահատիկ ա/բետոն h=5սմ „Բ"տիպ	100մ2	4.52	400,000.00	1,808,000.00	
11	E27-20	Կողնակների իրականացում ավազակոպճից հմիջ=10սմ	մ3	8.40	15,000.00	126,000.00	
		Ընդամենը				**3,575,269.20**	**3.62**
Երիտասարդական 1-ին փողոց 2-րդ նրբանցք							
I. Հողային աշխատանքներ							
1	E1-1623 E1-1630	IV(10e) կարգի գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 20մ լիցք	1000մ3	0.092	550,000.00	50,820.00	
2	E1-1582	IV(8դ) կարգի գրունտի մշակում 1,0 մ3 շերեփի տարողությամբ	1000մ3	0.040	550,000.00	21,835.00	

		էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր				
3	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	74.24	3,500.00	259,836.50
4	E1-1130	Հողային պաստառի համահարթեցում մեխանիզմով	100մ2	5.36	15,000.00	80,400.00
II.Ճանապարհային պատվածք						
5	E27-20	Ավազակոպճային շերտ հմիջ=10սմ	մ3	59.34	1,500.00	89,010.00
6	E27-43	Խճային հիմք h=15սմ	100մ2	5.93	55,000.00	326,370.00
7	E27-251 63-1	Բիտումի լցաբաշխում 4.12տ /1000մ2/	տ	2.445	250,000.00	611,202.00
8	E27-164-2	Տաք մանրահատիկ ա/բետոն h=5սմ „Բ"տիպ	100մ2	5.93	500,000.00	2,967,000.00
9	E27-20	Կողնակների իրականացում ավազակոպճից հմիջ=10սմ	մ3	11.40	12,000.00	136,800.00
				Ընդամենը		**4,543,273.50**
Երիտասարդական 2-րդ փողոց						**4.60**
I. Հողային աշխատանքներ						
1	E1-1623 E1-1630	IV(10e) կարգի գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 20մ լիցք	1000մ3	0.030	550,000.00	16,654.00
2	E1-1582	IV(10e) կարգի գրունտի մշակում 1,0 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.130	550,000.00	71,390.00
3	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 1.0կմ	տ	240.13	1,000.00	240,130.00
4	E1-1582	IV(10e) կարգի գրունտի մշակում 1,0 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.465	550,000.00	255,860.00
5	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	860.62	2,500.00	2,151,550.00
6	E1-1582	IV(8դ) կարգի գրունտի մշակում 1,0 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.599	550000	329,175.00
7	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	1119.20	2,500.00	2,797,987.50
8	E1-1130	Հողային պաստառի համահարթեցում մեխանիզմով	100մ2	5.36	10,000.00	53,600.00
II.Ճանապարհային պատվածք						
9	E27-20	Ավազակոպճային շերտ հմիջ=10սմ	մ3	477.80	1,000.00	477,800.00
10	E27-43	Խճային հիմք h=15սմ	100մ2	47.78	40,000.00	1,911,200.00
11	E27-251 63-1	Բիտումի լցաբաշխում 4.12տ /1000մ2/	տ	19.685	45,000.00	885,841.20
12	E27-164-2	Տաք մանրահատիկ ա/բետոն h=5սմ „Բ"տիպ	100մ2	47.78	400,000.00	19,112,000.00

13	E27-20	Կողնակների իրականացում ավազակոպճից հմիջ=10սմ	մ3	94.90	50,000.00	4,745,000.00	
Կողային առուների մաքրում							
14	E1-1587	III կարգի գրունտի մշակում 0,65 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.130	450,000.00	58,410.00	
15	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	240.13	2,000.00	480,260.00	
Ջրթող խողովակների վերատեղադրում (ՊԿ0+35-ՊԿ0+95)							
16	E22-71	Գոյություն ունեցող d=273մմ կիսախողովակի ապամոնտաժում	գծ.մ	60.00	800.00	48,000.00	
17	E23-1	Ավազակոպճային շերտ խողովակների տակ h=10սմ	մ3	5.760	1,000.00	5,760.00	
18	E22-71	Մետաղական կիսախողովակների վերատեղադրում d=273մմ; 1գծ.մ=33,05կգ; δ=5մմ	գծ.մ	60.00	8,000.00	480,000.00	
19	E8-27	Խողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ2	51.43	10,000.00	514,300.00	
Ջրթող խողովակների կառուցում (ՊԿ7+90)							
20	E22-71	Գոյություն ունեցող d=530մմ խողովակի ապամոնտաժում	գծ.մ	7.00	800.00	5,600.00	
21	E1-1582	բարձում էքսկավատորով 1,0 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.012	550,000.00	6,517.50	
22	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	0.721	2,000.00	1,442.00	
21	E23-1	Ավազակոպճային շերտ խողովակների տակ h=10սմ	մ3	1.000	1,000.00	1,000.00	
22	E22-71	Մետաղական խողովակների տեղադրում d=530.մմ; 1գծ.մ=103,0կգ; δ=8մմ	գծ.մ	7.00	8,000.00	56,000.00	
23	E30-230	Գլխադիրների միաձույլ բետոն B-15	մ3	0.86	304,520.00	261,887.20	
24	E8-27	Խողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ2	33.28	2,000.00	66,560.00	
					Ընդամենը	35,033,924.40	35.52
Երիտասարդական 3-րդ փողոց							
I. Հողային աշխատանքներ							
1	E1-1623 E1-1630	IV(10e) կարգի գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 20մ լիցք	1000մ3	0.043	500,000.00	21,550.00	
2	E1-1582	IV(10e) կարգի գրունտի մշակում 1,0 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.329	500,000.00	164,450.00	
3	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	608.47	2,000.00	1,216,930.00	

4	E1-1582	IV(8դ) կարգի գրունտի մշակում 1,0 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.159	450,000.00	71,730.00	
5	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	298.08	2,000.00	596,156.00	
6	E1-1130	Հողային պաստառի համահարթեցում մեխանիզմով	100մ2	20.55	10,000.00	205,500.00	
II.Ճանապարհային պատվածք							
7	E27-20	Ավազակոպճային շերտ հմիջ=10սմ	մ3	171.80	1,000.00	171,800.00	
8	E27-43	Խճային հիմք h=15սմ	100մ2	17.18	40,000.00	687,200.00	
9	E27-251 63-1	Բիտումի լցաբաշխում 4.12տ /1000մ2/	տ	7.078	231,000.00	1,635,054.96	
10	E27-164-2	Տաք մանրահատիկ ա/բետոն h=5սմ „Բ"տիպ	100մ2	17.18	350,000.00	6,013,000.00	
11	E27-20	Կողնակների իրականացում ավազակոպճից հմիջ=10սմ	մ3	33.70	10,000.00	337,000.00	
Բետոնե հարթակների քանդում (ՊԿ0+20-ՊԿ0+90)							
12	E46-99	Գոյություն ունեցող բետոնե հարթակների քանդում	մ3	45.00	1,000.00	45,000.00	
13	E1-1587	բարձում էքսկավատորով 0,65 մ3 շերեփի տարողությամբ ավտոինքնաթափեր	1000մ3	0.045	500,000.00	22,500.00	
14	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	90.00	2,000.00	180,000.00	
Ջրթող խողովակների վերատեղադրում (ՊԿ0+35-ՊԿ0+95)							
15	E22-71	Գոյություն ունեցող d=245մմ խողովակի ապամոնտաժում	գծ.մ	290.00	800.00	232,000.00	
16	E23-1	Ավազակոպճային շերտ խողովակների տակ h=10սմ	մ3	16.240	1,000.00	16,240.00	
17	E22-71	Մետաղական խողովակի վերատեղադրում d=245մմ; 1գծ.մ=29,45կգ; δ=5մմ	գծ.մ	232.00	2,500.00	580,000.00	
18	E22-71	Մետաղական խողովակի տեղադրում d=245մմ; 1գծ.մ=29,45կգ; δ=5մմ	գծ.մ	58.00	10,000.00	580,000.00	
19	E8-27	Խողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ2	446.19	10,000.00	4,461,900.00	
Ջրթող խողովակների միացումների կառուցում							
20	E23-1	Ավազակոպճային շերտ խողովակների տակ h=10սմ	մ3	3.200	700.00	2,240.00	
21	E8-27	Խողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ2	61.09	900.00	54,981.00	
22	E22-69	Միացումների համար մետաղական խողովակի տեղադրում d=152մմ; 1գծ.մ=14,5կգ; δ=4մմ	գծ.մ	64.00	7,900.00	505,600.00	
		Ընդամենը				17,800,831.96	**18.05**
Երիտասարդական 4-րդ փողոց							
I. Հողային աշխատանքներ							

1	E1-1623 E1-1630	IV(10e) կարգի գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 20մ լիցք	1000մ3	0.045	500,000.00	22,400.00
2	E1-1582	IV(10e) կարգի գրունտի մշակում 1,0 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.019	500,000.00	9,600.00
3	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 1.0կմ	տ	35.52	2,000.00	71,040.00
4	E1-1582	IV(10e) կարգի գրունտի մշակում 1,0 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.573	500,000.00	286,450.00
5	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	1059.87	2,000.00	2,119,730.00
6	E1-1582	IV(8դ) կարգի գրունտի մշակում 1,0 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.521	450000	521.20
7	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	974.64	2,000.00	1,949,288.00
8	E1-1130	Հողային պաստառի համահարթեցում մեխանիզմով	100մ2	44.46	1,000.00	44,460.00
II.Ճանապարհային պատվածք						
9	E27-20	Ավազակոպճային շերտ հմիջ=10սմ	մ3	371.00	1,000.00	371,000.00
10	E27-43	Խճային հիմք h=15սմ	100մ2	37.10	40,000.00	1,484,000.00
11	E27-251 63-1	Բիտումի լցաբաշխում 4.12տ /1000մ2/	տ	15.285	232,607.00	3,555,444.52
12	E27-164-2	Տաք մանրահատիկ ա/բետոն h=5սմ „Բ”տիպ	100մ2	37.10	380,000.00	14,098,000.00
13	E27-20	Կողնակների իրականացում ավազակոպճից հմիջ=10սմ	մ3	73.60	10,000.00	736,000.00
Կողային առուների մաքրում						
14	E1-1587	III կարգի գրունտի մշակում 0,65 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.155	450,000.00	69,750.00
15	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	286.75	2,000.00	573,500.00
		Ընդամենը				25,391,183.72
Երիտասարդական 6-րդ փողոց						
I. Հողային աշխատանքներ						
1	E1-1623 E1-1630	IV(10e) կարգի գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 20մ լիցք	1000մ3	0.172	35,000.00	6,020.00
2	E1-1582	IV(10e) կարգի գրունտի մշակում 1,0 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.074	350,000.00	25,795.00
3	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 1.0կմ	տ	136.35	800.00	109,076.00

4	E1-1582	IV(10e) կարգի գրունտի մշակում 1,0 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	1.111	350,000.00	388,885.00
5	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	2055.54	1,700.00	3,494,409.50
6	E1-1582	IV(8դ) կարգի գրունտի մշակում 1,0 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.582	300000	174,450.00
7	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	1087.41	1,700.00	1,848,588.50
8	E27-33	Ասֆատբետոնե շերտի քանդում	100մ3	0.260	90,000.00	23,400.00
9	E1-1582	բարձում էքսկավատորով 1,0 մ3 շերեփի տարողությամբ ավտոինքնաթափեր	1000մ3	0.026	500,000.00	13,000.00
10	շուկա	տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	52.00	1,700.00	88,400.00
11	E1-1130	Հողային պաստառի համահարթեցում մեխանիզմով	100մ2	74.91	3,900.00	292,149.00
II.Ճանապարհային պատվածք						
12	E27-20	Ավազակոպճային շերտ հմիջ=10սմ	մ3	371.00	750.00	278,250.00
13	E27-164-2	Տաք մանրահատիկ ա/բետոն h=5սմ „Բ"տիպ	100մ2	12.43	330,000.00	4,102,560.00
Կողային առուների մաքրում						
14	E1-1587	III կարգի գրունտի մշակում 0,65 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.155	33,000.00	5,115.00
15	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	286.75	1,700.00	487,475.00
Մետաղական խողովակ (ՊԿ2+34)						
16	E23-1	Ավազակոպճային շերտ խողովակների տակ h=10սմ	մ3	0.950	900.00	855.00
17	E22-71	Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ	գծ.մ	9.00	24,000.00	216,000.00
18	E30-230	Գլխադիրների միաձույլ բետոն B-15	մ3	0.34	50,000.00	17,000.00
19	E8-27	Խողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ2	20.20	1,500.00	30,300.00
Ջրթող խողովակի կառուցում (ՊԿ3+03)						
20	E22-71	Գոյություն ունեցող երկու d=720մմ խողովակների ապամոնտաժում,	գծ.մ	13.00	4,000.00	52,000.00
21	E1-1582 29.39	բարձում էքսկավատորով 1,0 մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.029	350,000.00	10,276.00
22	շուկա	Գրունտի տեղափոխում լցակույտ 7.0կմ	տ	1.827	1,700.00	3,105.90

23	E1-1545	III կարգի գրունտում հողային աշխատանքներ հունի ուղղման համար	1000մ3	0.009	350,000.00	2,975.00	
24	E1-1545	III կարգի գրունտում փոսորակի փորում խողովակի համար	1000մ3	0.029	350,000.00	10,290.00	
25	E23-1	Ավազակոպճային շերտ խողովակների տակ h=10սմ	մ3	1.300	800.00	1,040.00	
26	E23-2	Խճային հիմք h=30սմ	մ3	3.600	35,000.00	126,000.00	
27	E22-71	Մետաղական խողովակի տեղադրում d=720մմ; 1գծ.մ=140,5կգ; δ=8մմ	գծ.մ	8.50	8,000.00	68,000.00	
28	E30-230	Մետաղական խողովակի մուտքի և ելքի գլխամասերի կառուցում B20 դասի միաձույլ բետոնից	մ3	2.60	8,000.00	20,800.00	
29	E30-230	Մետաղական խողովակի մուտքի և ելքի վաքերի կառուցում B20 դասի միաձույլ բետոնից	մ3	1.00	900.00	900.00	
30	E8-27	Խողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ2	24.80	4,000.00	99,200.00	
31	շուկա	Որմնակապային ամրան &16 A 500C, L=134 սմ	տ	0.004	90,000.00	360.00	
32	E1-1633	Գրունտի ետլիցք	1000մ3	0.018	400,000.00	7,120.00	
Ջրընդունիչի կառուցում							
33	E6-1-2	Ջրընդունիչի կառուցում B15 դասի միաձույլ բետոնից	մ3	2.60	9,000.00	23,400.00	
34	շուկա	Ամրանային ցանց 100x100x4	մ2	19.000	4,000.00	76,000.00	
35	շուկա	Շվելեր 8	մ	16.000	3,000.00	48,000.00	
36	շուկա	Անկյունակ 45x45x4	մ	16.00	3,000.00	48,000.00	
37	շուկա	Անկյունակ 90x56x6	մ	16.00	4,000.00	64,000.00	
		Ընդամենը				12,263,194.90	**12.4363**
					Ընդամենը նախահաշվով	**98,607,677.68**	**100.00**

Ըստ Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների) հետևյալ ոլորտների՝

Չափաբաժինների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	2
3	1.տրանսպորտային

* Կապալառուն աշխատանքները կատարում է յուր. չափաբաժնի համար ծավալաթերթերում նշված հասցեներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Աբովյանի համայնքապետարան
ք. Աբովյան, Բարեկամության հր. 1
ՀՎՀՀ՝ 03561498
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ
Հ/Հ900102462299

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԷՅԷՄԴԻ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

Հասցե՝ Արագածոտն, Աշտարակ,
Մուղնի 2 թաղամաս 191
ՀՎՀՀ՝ 05027938
Բանկ՝ «Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2051322089481001

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«24» օգոստոսի 2022թ. կնքված
«ԱԲՀ-ԲՄԱՇՁԲ-22/20-2» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԻՆՋ, ԱՐԱՄՈՒՍ, ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱ և ԱԲՈՎՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՌՈՍԻԱ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԵՎ ԵԶՐԱՔԱՐԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
3	*Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի ասֆալտապատման աշխատանքներ*	*Շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության պայմանագրի կնքման օրվանից*	*Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ*
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Աբովյանի համայնքապետարան
ք. Աբովյան, Բարեկամության հր. 1
ՀՎՀՀ՝ 03561498
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ
Հ/Հ900102462299

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԷՅԷՄԴԻ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

Հասցե՝ Արագածոտն, Աշտարակ,
Մուղնի 2 թաղամաս 191
ՀՎՀՀ՝ 05027938
Բանկ՝ «Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2051322089481001

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«24» օգոստոսի 2022թ. կնքված
«ԱԲՀ-ԲՄԱՇՁԲ-22/20-2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
				օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	45231187	*Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի ասֆալտապատման աշխատանքներ*	Համայնքի մասնաբաժին	39 443 071	49 303 839	64 094 990	64 094 990	64 094 990	64 094 990
			Պետության մասնաբաժին /սուբվենցիա	34 512 687					**Աշխատանքների մնացած մասի կատարման հիմնավորումն հավաստող փաստաթղթերի ներկայացվելուց, հաստատվելուց և ֆինանսական միջոցներ ստանալուց հետո:**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Աբովյանի համայնքապետարան
ք. Աբովյան, Բարեկամության հր. 1
ՀՎՀՀ՝ 03561498
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ
Հ/Հ900102462299

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԷՅԷՄԴԻ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

Հասցե՝ Արագածոտն, Աշտարակ,
Մուղնի 2 թաղամաս 191
ՀՎՀՀ՝ 05027938
Բանկ՝ «Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2051322089481001

/ստորագրություն/
Կ.Տ